ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՓԱՍՏԱԲԱՆԻ ԴԵՐԸ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Իրավական պետություններում, արդարադատության իրականացման գործընթացում բավականին մեծ է փաստաբանի դերը: Այս առումով շատ կարևոր է վերլուծել փաստաբանի վարքագիծը մի շարք օբյեկտիվորեն ձևավորվող իրավիճակներում:

Քիչ չեն դեպքերը, երբ փաստաբանը իրավաբանական օգնություն ցուցաբերելու ընթացքում պարզում է, որ իր պաշտպանյալն իրականում կատարել է այն հանցագործությունը, որի համար նրան մեղադրում են, սակայն պաշտպանյալը այն ժխտում է: Կամ ինչպե՞ս վարվել այն դեպքերում, երբ պաշտպանյալը փաստաբանի առջև խոստովանում է իր կատարած հանցագործության մասին, սակայն դատարանում այն ժխտում է: Ինչպե՞ս պաշտպանել մարդուն, որի կատարած հանցագործությունը հակասության մեջ է մտնում քո ներքին համոզմունքների հետ: Ինչպե՞ս նպաստել, որ պայմանականորեն ասած մանկահասակ երեխային բռնաբարող հանցագործը հայտնվի ազատության մեջ և այլն:

Թերևս սրանք հարցեր են, որոնք չունեն միանշանակ պատասխաններ, սակայն այստեղ ուղղակի անհրաժեշտ է անդրադառնալ փաստաբանի վարքագծին:

Ինչպես հայտնի է փաստաբան-պաշտպանյալ/վստահորդ հարաբերություններում փաստաբանից պահանջվում է պաշտպանության համառ և հետեւողական իրականացում: Պաշտպանի գործունեության մեջ էական դեր է խաղում նրա մասնագիտական էթիկան:

Փաստաբանի բարոյական կասկածների ու տառապանքների մասին իր կարծիքն է արտահայտել ռուս փաստաբան Մ. Կազարինովը փաստաբաններ Ազունովի ու Արոնսոնի գործով: Ըստ նրա «*Քրեական գործերի բաժանումը փաստաբանների համար ընդունելիների և անընդունելիների, արմատապես սխալ է: Դատարանում փաստաբանության հին ու փորձառու ներկայացուցիչներից մենք լսել ենք համակրելի և անհամակրելի գործերի մասին: Համակրելին այնպիսի գործեր են, որոնցում հասարակական խիղճը ամբաստանյալի կողմն է: Նման գործերը արձագանք չի գտնում դատավորների սրտում հետևաբար արդարացնող դատավճիռն ապահովված է: Սակայն լինում են դեպքեր, երբ ամբաստանյալն խրված է մեղքերի ու հանցանքների մեջ, օրինավորն ու ազնիվն նրանից երես են թեքել, իսկ դատավորների սրտերը լցված են զայրութով: Այս դեպքում մեղադրական դատավճիռն ապահովված է: Նման գործերում անհրաժեշտ է նվիրված և անձնազոհ պաշտպանությունն, որի խնդիրն է ամբաստանյալի և դատավորի միջև վերականգնել խզված բարոյական կապը, ցույց տալ, որ ամբաստանյալը նույնպես մարդ է՝ Աստծո կնիքով և աստվածուրաց գծերով, հարկ է նրա նկատմամբ առաջացնել դատողների կարեկցանքը*»:

Փաստաբանը կոչված է պաշտպանելու ոչ թե հանցագործությունն, այլ մարդուն, նրա իրավունքներն ու օրինական շահերը, կանխելու չհիմնավորված դատապարտումն ու անարդարացի պատիժը: Փաստաբանի մասնագիտական էթիկայի գործնական նշանակությունը պայմանավորվում է նրանով, որ նա օգտվում է դատական ամբիոնից, որը նրան հնարավորություն է ընձեռում ներազդելու մարդկային զանգվածի գիտակցության վրա: Որոշակի սահմանափակ դեպքերում փաստաբանը կարող է օգտվել նաև հանրային հարթակներից, երբ դատական ամբիոնը ակնհայտորեն իրեն թույլ չի տալիս արդյունավետորեն ներազդելու մարդկային զանգվածի գիտակցության վրա: Այստեղից պետք է հետևեցնել, որ փաստաբանի բարոյական նկարագիրը և նրա արժեքային կողմնորոշումները ստանում են անմիջական հասարակական նշանակություն:

Ռուս հայտնի փաստաբան՝ Կոնին այս առումով արդարացիորեն գտնում էր, որ քրեական պաշտպանությունն ավելի շատ առիթներ է տալիս պահանջներ ներկայացնելու

բարոյական ոլորտից, քան մեղադրողի գործունեությունը, ամբաստանյալի ու հասարակության միջև առաջացած բարդ ու բազմիմաստ հարաբերությունների պատճառով:

Որպես կանոն, դատավարության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավասու է գործի նկատմամբ գրավել այնպիսի դիրք, որը համապատասխանում է իր ներքին համոզմանը: Մինչդեռ փաստաբանը մի շարք դեպքերում ստիպված է լինում խլացնել իր ներքին համոզմունքը, քանի որ նա չի կարող հրաժարվել պաշտպանությունից նույնիսկ այն դեպքում, երբ հանցագործության բնույթը լրիվ հակառակ է այսպես ասած բարոյական զգացումին: Նման դեպքերում պաշտպանյալի շահերը համաձայն փաստաբանի կոչման պետք է ավելի բարձր դասվեն ճշմարտության շահերից, քանի որ փաստաբանն իր կոչմանը հավատարիմ իրավունք չունի բացահայտելու այն հանգամանքներն որոնք մերկացնում են իր պաշտպանյալին:

Փաստաբանի գործունեությունը դատախազականից տարբերվում է նրանով, որ փաստաբանը պարզաբանում է գործի այն հանգամանքները, որոնք արդարացնում կամ մեղմացնում են ամբաստանյալի մեղքը: Հիպոկրատի պատվիրանը (առաջինը չվնասել), վերաբերվում է ոչ միայն բժիշկներին, այլև փաստաբաններին: Նրանք պարտավոր են իրենց գործունեությամբ վնաս չպատճառել պաշտպանյալի շահերին: Այս առումով պետք է փաստել, որ փաստաբանի համար առաջնահերթ խնդիր է իր պաշտպանյալի օրինական շահերը: Այստեղ հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ի վերջո փաստաբանը արդարադատություն իրականացնող մարմին չէ և վերջնական որոշում կայացնողը միշտ էլ դատարանն է:

Իրավաբանական բացատրական բառարանների մեջ փաստաբանական գործունեությունը բնորոշվում է հետևյալ կերպ. «*Փաստաբանական օգնությունը իրենից ներկայացնում է համալիր գործողություններ, որոնք վստահորդի համար առավել բարենպաստ արդյունքի հասնելու նպատակով ազդեցություն են ունենում իրավահարաբերությունների վրա*»: Այստեղից էլ պետք է եզրակացնել, որ փաստաբանի գերագույն գլխավոր նպատակը իր վստահորդի շահերն են:

Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետը սահմանում է, որ փաստաբանը պարտավոր է չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը: Այս առումով պարզ է, որ փաստաբանների համար հաճախորդի շահը ավելին է քան բուն արդարադատությունը: Ընդ որում, նմանատիպ նորմ առկա է գրեթե բոլոր զարգացած երկրների օրենսդրություններում:

Իհարկե ես ընդունում եմ, որ շատ մարդիկ կհակադրվեն այս մոտեցմանը, բայց մի բան ակնհայտ է, որ եթե պաշտպանյալը հրապարակայնորեն ժխտում է իր մեղսակցությունը, ապա փաստաբանը օրենսդրորեն կաշկանդված է այն ընդունելու: Տվյալ դեպքում փաստաբանը կարող է հրաժարվել այդ գործից, բայց այն միանշանակորեն կարող է ազդել իր հետագա վարկանիշի վրա:

Մի առիթով ինձ հարցրեցին թե ինչպես եմ ես նպաստելու նրան, որ մեկ տարեկան երեխային վերցնեն մորից և հանձնեն հոգեբանորեն անհավասարակշիռ հորը, որը պատրաստվում է այդ երեխային տանել արտասահման և նրա դաստիարակությունը հանձնել սոցիալական մարմիններին: Երբ ես մտածեցի այդ հարցի վրա մի պահ վարանեցի, քանի որ բարոյական այն ֆոնը, որը ստեղծում էր զրուցակիցս, անկասկած հիմնվելով բացառապես ենթադրությունների վրա, որոշակի առումով ճնշող էր: Երբ ինձ հաջողվեց մի կողմ թողնել էմոցիաներն ու ենթադրությունները, ապա հասկացա, որ փաստաբանը երբեք չպետք է խորամուխ լինի գործի այսպես ասած «բարոյական[1]» մասի մեջ, դա փաստաբանի համար ճահիճ է, որից նա դժվարորեն կարող է դուրս գալ: Զգացմունքային դաշտում փաստաբանը անխուսափելիորեն ջախջախվելու է և զգացմունքը փաստաբանի համար թույն է, ուստի ըստ իս փաստաբանը կոնկրետ գործի զգացմունքային մասը պետք է թողնի բանասերներին և լրագրողներին:

Փաստաբանի համար կոնկրետ գործը դա խնդիր է, որը նա պետք է լուծի իրավունքի շրջանակներում ուշադրություն չդարձնելով այդ գործում հանդես եկող անձանց: Այս խնդրի լուծման համար փաստաբանը կարող է օգտագործել օրինական կարգով այն ամենը ինչը հնարավորություն կտա բարելավել իր պաշտպանյալի կարգավիճակը: Սրա հետ միաժամանակ, փաստաբանի համար անընդունելի պետք է լինի այնպիսի միջոցներ ինչպիսիք կրում են անօրինական բնույթ (կաշառք, շանտաժ, նենգ միջոցներ, այլ անօրինականություններ և այլն): Ի վերջո փաստաբանը հանդիսանում է նաև իրավունքի զինվոր, քանի որ բոլոր ժամանակներում փաստաբանները «ոչ ցանկալի» մարդիկ են եղել հատկապես իշխանության ներկայացուցիչների համար: Այս առումով հատկանշական է ռուսական փորձը: Մասնավորապես, երբ Ռուսաստանի թագավոր Պետրոս Ի-ը 1698թ.-ին

[1] «Բարոյական» բառը օգտագործվում է խիստ պայմանական, քանի որ օրենքների միջոցով, որպես կանոն, արտահայտվում է ոչ միայն իրավունքը այլ նաև տվյալ հասարակության կողմից ընդունված բարոյականությունը:

Անգլիայում այցելեց դատարան այնտեղ տեսավ «օրենսգետներին» այսինքն փաստաբաններին՝ պատմուճանով և կեղծամով: Նա հարցրեց՝ «Ովքե՞ր են սրանք և ի՞նչ են այստեղ անում» «Սրանք բոլորը օրենսգետներ են Ձերդ Գերազանցություն» - պատասխանեցին նրան: «Օրենսգետնե՞ր – զարմացավ Պետրոսը: - Ինչի՞ համար են նրանք: Իմ ամբողջ թագավորությունում միայն երկու օրենսգետ կա, որից մեկին, երբ վերադառնամ պետք է կախաղան հանեմ»: Նույն կարծիքին է եղել նաև Եկատիրինա II-ը. «Քանի դեռ ես ողջ եմ փաստաբաններն ու դատախազները ինձ մոտ օրենսդրությամբ չեն զբաղվելու, իսկ իմ մահից հետո կհետևեն այն սկզբին, որը կիմնեմ ես»: Այս առումով նա լիովին ճշմարիտ էր, քանի որ իմպերատոր Նիկոլայի I-ը նույն հաստատակամ ոճով ասում է կնյազ Գոլիցինինին, որը պնդում էր փաստաբանության ինստիտուտի ներդրման անհրաժեշտության մասին. «Ոչ, կնյազ, քանի դեռ ես թագավորելու եմ, Ռուսաստանին պետք չեն փաստաբաններ: Կապրենք նաև առանց նրանց»:

Վերը նշվածը ցույց է տալիս, որ փաստաբանները հաճախորդների շահերից զատ նաև ի լույս են հանում այն մութ գործերը, որոնք իրականացնում են բոլոր ժամանակների իշխանության կրողները, ուստի այդ առումով փաստաբանին կարելի է կոչել նաև իրավունքի զինվոր:

Ծանուցում. Այստեղ ներկայացված մտքերը չեն հանդիսանում իրավաբանական խորհրդատավություն

ԳԵՎՈՐԳ ԳՅՈԶԱԼՅԱՆ
Դատավարական թիմի ղեկավար – գործընկեր
ggyozalyan@tk.partners